Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. **Անունը, ազգանունը՝**
   Մարտիրոս Նալբանդյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի նախագահի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Բորդո (Ֆրանսիա), 2024թ. հոկտեմբերի 7-ից 11-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Ջրավազանային կազմակերպությունների միջազգային ցանցի (INBO) քարտուղարություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն Ջրավազանային կազմակերպությունների միջազգային ցանցի (INBO) 30 ամյակի շրջանակներում կազմակերպված 12-րդ Համաշխարհային Գլխավոր գագաթաժողովին (ջրավազանային կառավարման մակարդակում հատկորոշելու ջրային համակարգերի կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված հնարավորությունները և ծանոթանալ միջազգային փորձին ու զարգացումներին):

6. **Քննարկված թեմաները.**

Գագաթաժողովի շրջանակներում կազմակերպված են եղել 4 թեմատիկ պանելային քննարկումներին՝ հետևյալ թեմաներով.

1. Անդրսահմանային համագործակցություն և ջրի որակի կառավարում,
2. Ջրի լավ էկոլոգիական վիճակ,
3. Ջրային ռեսուրսների որակական և քանակական պահպանություն,
4. Կլիմայի փոփոխության հարմարվողականություն:

7. **<u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.</u>**

Հանդիպում եմ ունեցել Ջրավազանային կազմակերպություններևրի միջազգային ցանցի (INBO) գլխավոր քարտուղար Էրիկ Տարդեույի հետ՝ քննարկելով ընդհանուր համագործակցությանը վերաբերող հարցեր, «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար. ջրային ռեսուրսներ և շրջականմիջավայրի տվյալներ» ծրագրի շրջանակներում ձեռքբերումները, ինչպես նաև հետագա հնարավոր համագործակցության ուղղությունները:

Գագաթնաժողովի շրջանակներում մասնակցել եմ «Կլիմայի փոփոխության հարմարվողականության գործիքներ և միջոցառումներ» թեմայով պանելային քննարկմանը, որի շրջանակներում զեկուցմամբ ներկայացրել եմ այդ ուղղությամբ Հայաստանի փարձը՝ ջրային համակարգերի կառավարման ոլորտում:

8. **<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.</u>**

Հանդիպման ժամանակ որոշումներ չեն ընդունվել, պարտադիր կատարման ենթակա պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **<u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u>**

Առաջարկում եմ հետագայում ևս շարունակել ակտիվ համագործակցությունը Ջրավազանային կազմակերպություններևրի միջազգային ցանցին (INBO) ինտեգրվելու ուղղությամբ, ինչը կնպաստի ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետությանը, ԵՄ դիրեկտիվներին մոտարկման դյուրինացմանը և ջրային համակարգերի կառավարման գործելակերպերի և փորձի զարգացմանը:

<u>Լրացուցիչ տեղեկատվություն.</u>

Հանդիպմանը Հայաստանից հրավիրված էին ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցիչները: ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից հանդիպմանը մասնակցում էր նախարարի տեղակալ պարոն Տիգրան Գաբրիելյանը:

10. **<u>Ստորագրությունը, ամսաթիվը:</u>**

18.10.2025